

ԴԱՓՆԵՐ ԴԻԱՄԱԳԵԴՏԸ

Թուականէս մօտ տասնըմէկ տարի առաջ Անտիոքի արուարձաններէն Հարպիյեթի մերձակայքը, — հիներուն՝ նշաւաւոր Daphne-էն —, գիւղացի մը հողը պեղելու առնն կը հանդիպի կաւէ բղւկի մը մէջ հայտատու դրամներու մեծ ու փոքր զանազան տեսակի հարիւր քսան կտորներու: Ինչպէս յայտնի է, այդ շրջանին՝ դէպի Անտիոք Հայկ. Կիլիկիոյ յառաջացեալ սահմանն էր, Անտիոքէն հազիւ երեսուն քիլոմետր հեռաւորութեամբ, Պաղատի համբաւուր ամրոցը: — Հիներուն՝ Pagrae, Pagras, Château des Adolescents, Château de St. Luc, Gaslin եւն, — որ երկար ժամանակ կոչուալնձոր հանդիսացաւ հայ և ֆրանկ իշխաններու և հետագային ալ հայ թագաւորներու, ֆրանկ իշխաններու, Տաճարական Ասպետներու և արար Սուլթաններու միջեւ: Ուրեմն զանաւոր յայտնաբերուել է Կիլիկիոյ սահմանամերձ Անտիոքի խաչակիր ֆրանկ-լատին իշխանապետութեան սահմանէն ներս: Այստեղ էր դարձեալ որ՝ եօթանասունական թուականներուն զանուեցաւ խաչակիրներու պատկանող գանձ մը, որուն մէջ առաջին անգամ ըլլալով յայտնուեցաւ Մեծն Լեոնի մէկ խիստ փոքր լատինատառ ու արծաթապղինձ (Billon) դրամը: Դրամի մօտին զրեց և զայն ներկայացուց յայտնի Բիւզանդազիր և հայասէր Կիւսթաւ Շլումպերկէր. «Revue Archeologique» n. 3. 1875 թուի համարին մէջ: Հոս աւելցնենք՝ որ դրամագիտութեան բարեբախտութենէն կը կազմէ խիստ շահեկան և արժէքաւոր ամբողջութիւն մը՝ որ կը բաժնուի երեք զլխաւոր մասերու:

Առաջին՝ Մեծն Լեոնի դրամները:

Երկրորդ՝ Հեթում Ա.ի և Զապէլ Թագուհիի դրամները:

Երրորդ՝ Սելճուկ դրամները: Մեծն Լեոնի դրամները կը բաղկանան. Երկդրամեան (Didrachme), կէս — Երկդրամեան, Կիսադրամ (Hémidrachme) կամ քառորդ Երկդրամեան և հասարակ դրամներէ, (Drachme):

Հեթում Ա.ի և Զապէլ Թագուհիի դրամները կը բաղկանան, — Հեթում Թագաւորի և Զապէլ Թագուհիի միասնաբար հատադրուած ծանօթ սովորական դրամներէն և մէկ հատ նոյն ձեւի կիսադրամէ:

Օտար դրամները կը բաղկանան. — Գրլըճ Արսլանի որդի Քէյխոսրով Ա.ի Սեբաստիոյ մէջ հատադրուած դրամներէն և համանուն Գրլըճ Արսլանի (Զորորդ) որդի Քէյխոսրով Գ.ի դրամներէն:

Բ.

Մեծն Լեոնի դրամները մինչեւ օրս յայտնաբերուած ու հրատարակուած նոյն տիպի դրամներուն աշխարհի ամենաճոխ և կատարելութեան հասնող հաւաքածոն կը կազմեն և մեծաւ մասամբ կ'ամբողջացնեն մեր հայտատու դրամներուն այնքան զեղեցիկ շէնքին կիսաւարտ ճակատը:

Լրիւ ու ամբողջական գաղափար մը կազմելու համար պէտք է զանոնք գէթ բաղդատութեան զննք Վիեննայի Միւթարեան Հայրերու Թանգարանին աշխարհահռչակ ու մեծագոյն հայկական դրամներու հաւաքածոյին ընդհանուր ցանկին հետ: Միւթարեան հայրերու անխոնջ աշխատանքը, նիւթական ծանր զոհողութիւնները, տարիներու տաժանակիր ճամ-



Թիւ 1. — Մեծն Լեոնի ամտիպ երկդրամեան շրջագիծ 2 հրդմ. 80
ծանրութիւն 59,35.



Թիւ 3. — Երկրորդ կողմ
ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԱՐՆ ԱՍՏՈՒԾՈՑ



Թիւ 2. — Մեծն Լեոնի ամթիրի արծաթագրութեամբ երկդրամեան Առաջին կողմ.
Տարածութիւն 2 հրդմ. 60
Ծանրութիւն 5,55
ԼԵՒՈՆ ԹԱԳԱՆՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Թիւ 4. — Հեթումի և Զապէլի առաջին բաժանութի մաս կազմող ամտիպ կիսադրամ. Առիծի կոմակը չի բարձրամար սովորական խաչի երկու զիծը,
Շրջագիծն է 1 հրդմ. 70
ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՆՈՐ



ընդունվածներն փոքր Ասիա և այլուր, առաջնորդ էր ասոնց վրայ զանազաններու անհատական հաւաքածոներու միաձուլումը վանքին զխառն հաւաքածոյին վրայ, (ինչպէս Պոռեւի, թիմոնի և այլոց) տուած է հետեւեալ արդիւնքը.

Երկրամեան՝ 15 կտոր (և ոչ թէ տեսակ):
Կէս երկրամեան 12 կտոր (և ոչ թէ տեսակ):

Կիսադրամ՝ մինչեւ Հ. Գալէմբէրեանի մահը վանքը կիսադրամ չունէր: Գումարը՝ 27 կտոր դրամ միայն:

Հոս պէտք է նշել որ, այս չափանիշին հասած է վանքը ոչ միայն վերը յիշուած միջոցներով այլ և մանաւանդ ժամանակի անհրեակայելի դրամագլուխով որ առելիքան յիսնամեակի մը հասնող կեանք ու աշխատանք արժեք է հեղինակներուն: Այս ցցուն պատկերին դիմաց, ինչ կը ներկայացնէ դրամագլուխ միեւնոյն տիպի պատկանող դրամներուն ամբողջութիւնը: Մենք դասաւորած ենք.

14 տեսակ երկրամեան, մեծամասնութեամբ անտիպ (inédit):

22 տեսակ կէս-երկրամեան, մեծամասնութեամբ անտիպ (inédit):

1 տեսակ կիսադրամ կամ քառորդ երկրամեան:

Գումար՝ 37 տեսակ դրամ, առանց հաշուելու տասնեակներով կրկնակ (endouble) դրամները: Պերճախօս այս թիւերը կը պարզեն ուրեմն բացարձակ արժէք — առաւելութիւն որ պիտի ներկայացնէ դրամագլուխ հայկական դրամագլուխութեան պատմութեան համար և նոր հորիզոններ պիտի բանայ հայկական դրամները ուսումնասիրողներուն առաջ: Մասնաւոր ուշադրութեան արժանի է թիւ 14 երկրամեան: Մինչեւ օրս մեզի ծանօթ և հրատարակուած երկրամեաններուն զըլխաւոր խորագիրներ եղած են:

Կամ՝ Լեւոն թագաւոր Ամենայն Հայոց.
Լեւոն » » »
Իսկ վերեւ յիշուած թիւ 14 երկրամեան

կը հետեւի հաւաքածոյիս կէս-երկրամեաններու արձանագրութեանց ձեւին որն է՝

Լեւոն թագաւոր Հայոց: Պատկեր թիւ 1:
Ինչպէս որ կէս-երկրամեաններն ու նին իրենց երկու ձեւերն ալ — (տես Կ. Բասմաճեանի, Հայոց դրամագլուխութեան պատմութեան վերաբերող հատորը), այս դրամով ալ երկրամեաններն եւս կու գան լրացնելու իրենց ամբողջական շարքը: Կը մնայ հետամտել և ամբողջացնել լրացուցիչ զանազանութիւնները: Ուշադրութեան արժանի է նաեւ թիւ 12 երկրամեան իր երկու կողմի անթերի արձանագրութիւններով: Տես պատկեր թիւ 2:

Գ.

Հեթում Ա.ի և իր գահակից և կողակից Զապէլ թագուհիի դրամներն եւս զուրկ չեն շահեկանութենէ իրենց բազմաթիւ և այնքան հետաքրքրական զանազանութիւններով, ու կը կազմեն ըստ բաւականի ճոխ հաւաքածոյ մը: Այս դրամները ունին զըլխաւոր երեք բաժանումներ.

Առաջին՝ այն դրամները՝ որոնց առաջին կողմի առիւծին թաթը դէպի առաջ քաշուած ձեւով պարզուած է, սակայն առիւծին կռնակէն չի բարձրանար սովորական խաչի երկար զիծը:

Երկրորդ՝ այն դրամները՝ որոնց առաջին կողմի առիւծին թաթը դէպի առաջ քաշուած ձեւով պարզուած է, և առիւծի կռնակէն ալ կը բարձրանայ սովորական խաչին երկար զիծը:

Երրորդ՝ այն դրամները՝ որոնց առաջին կողմի առիւծն իր ճիւղանով բռնած է երկար խաչը:

Այս երեք զըլխաւոր բաժանումները դասաւորելով ունեցանք ինը առանձին շարքեր, քսոսասուն տեսակ կամ տարբերակ դրամներով:

Մասնաւոր ուշադրութեան արժանի են առաջին բաժանումի դրամներն ու կիսադրամը: Ո՛չ Հ. Կ. Սիպիլեանի « Դասաւորութիւն Ռուբլիեան Դրամոց » հատորին և ոչ ալ Կ. Բասմաճեանի « Հայկական դրամագլուխութեան պատմութեան » մէջ յիշատակուած նկարուած և կամ նմանահանութեամբ փորագրուած կը գտնենք զանոնք: Միակ յիշատակութիւնը որ եղած է նմանաձեւ առիւծի մը մասին (որ սակայն ըստ էութեան մաս չի կազմեր Հեթում Ա.ի և Զապէլ թագուհիի դրամներուն, — ինչորոշ առարկայ դրամն, Լեւոն Բ. և Հեթումի մասին է —, և սակայն լոյս կը սփռէ մեր յայտնութեան շուրջ) կը գտնուի Հ. Կ. Սիպիլեանի ծանօթ հատորի՝ մէջ: Տես « Դասաւորութիւն Ռուբլիեան Դրամոց » Ռուբլիեան թագաւորներու մինչեւ հիմա չհրատարակուած դրամները զըլխին, էջ 29ի, Ուղղելիք և Յաւելիքի վերջին մասին երրորդ տողը « Մեր թանգարանի Հեթում — Զապէլ 163 դրամներուն մէջ գտանք մենք ալ մի միակ օրինակ մը, որուն Ա. կողման պատկերը նոյն է Տախտ. Բ. թ. 21 դրամին հետ, իսկ Բ. կողման կեղծոն առիւծ դէպի յաջ, նման Բ. Տախտ. թ. 20ին. բայց առիւծին կռնակը խաչ լիայ: (ընդգծումը մերն է): Իսկ ընթերցուածն ալ... կարգա՝ « Լեւոն թագաւոր ամենայն Հայոց եւն »:

Մենք առաջինը կ'ըլլանք ուրեմն այս նոր տիպի դրամները հանրութեան ներկայացնող, որով՝ Հեթում — Զապէլի այնքան զանազանութիւններով հարուստ շարքերուն վրայ կու գայ առելիալ բոլորովին

նոր և ինքնատիպ շարք մը եւս: Տես պատկեր թիւ 3:

Գ.

Սելճուկ դրամներու մասին հոս տեղին է զբաղիլ: Միայն նշելու եմ՝ որ այս դրամներն ալ իրենց ժամանակագրական փաստով կու գան անգամ մը եւս հաստատել ու սահմանել Մեծն Լեւոնի դրամա ներու ընդունուած կարգը: Ունին նաեւ պատմական ուրիշ արժէք մը եւս: Հայաստանի վրայ տիրապետող և Սելճուկեան շրջանը զատուող մէկական փաստակներն են, նա մանաւանդ՝ որ անոնց հնարագործութեան երեքմի հայաշատ կեղտն Սերաստիոյ մէջ: Այս անգնահատելի գանձը որ մեծարժէք շրջանակի մը մէջ գրուած պիտի երթայ զարգարել Հայաստանի Պետական Հնութեանց Թանգարանի մէկ անկիւնը, ունի ազգային ու պետական անկորնչելի արժէք մը: Նուէրն է Պէյրութաբնակ ծանօթ ազգայիններէն և բնիկ Կեսարացի Տիար Արմենակ Ա. Փոլտեանի, որ խիստ նախանձախնդիր է նման հայկական բնոյթ կրող ամէն տեսակի հնութեանց բարուք պահպանումին:

Սոյն հաւաքածոյին առնթեր Հայաստանի Հնութեանց Պետական Թանգարանին կը դրկինք նաեւ դրամներու ուսումնասիրութիւնը և դասաւորութիւնը զեղակազմ, պատկերազարդ մեծածաւալ հատորի մը մէջ ամփոփուած և յօրինուած ստորագրողիս կողմէ:

ՊԵՐՃ Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ջանվել 21 Օգոստոս 1947.